ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ փակ բաժնետիրական ընկերության Հիմնադիր ժողովի կողմից՝
26/03/2003թ. թիվ G-1/03 որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

ՓՈՓՈԽՎԱԾ Է
02.08.2018թ. թիվ 26 որոշմամբ
10.12.2019 թ. թիվ 29-1 որոշմամբ
04.01.2022թ. 32-2 որոշմամբ
21.11.2024 թ. 39-1 որոշմամբ
23.06.2025թ. թիվ 40-4 որոշմամբ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

Մարտին Գալստյան *(էլ. ստորագրություն)*

Գրանցված է 03.09.2025թ.

Խորհրդի նախագահ՝

Հակոբ Անդրեասյան *(ստորագրություն)*

Գլխավոր տնօրեն

Աղասի Գասպարյան *(էլ. ստորագրություն)*

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության

(նոր խմբագրություն)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ 4
3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ 5
4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ԴՐԱ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ 6
5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 7
6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ 8
7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ 8
8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ 9
9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ 15
10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԸ 21
11.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԸ 22
12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԸ) 22
13. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 23
14. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ 23

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է հիմնադիրների՝ 20 մարտի 2003թ. որոշմամբ և հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն, որի գլխամասային գրասենյակը գտնվում է Հայաստանում, ք.Երևանում: 04/01/2022թ.-ի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ ընկերությունը վերանվանվել է «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն):
Ընկերությունը իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից պետական գրանցում և լիցենզիա ստանալու պահից:
1.2. Իր գործունեության ընթացքում Ընկերությունը ղեկավարվում է ՀՀ սահմանադրությամբ, քաղաքացիական օրենսգրքով, «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով և այլ օրենքներով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և այլ ենթաօրենսդրական ակտերով:
1.3. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն, անգլերեն գրառումներով), դրոշմակնիք և ձևաթղթեր, ինչպես նաև կարող է ունենալ օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու անհատականացման այլ վավերապայմաններ:
1.4. Ընկերության բաժնետերերի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ (այսուհետ նաև՝ Կանոնադրություն) և Բաժնետերերի Պայմանագրով: Սույն կանոնադրության պահանջները պարտադիր են Ընկերության բաժնետերերի և կառավարման մարմինների համար:
1.5. Ընկերությունն ունի առանձնացված գույք և ակտիվներ, իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
1.6. Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:
1.7. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար, եթե վերջիններիս անունից հանդես եկող պետական մարմինները դրանք չեն ստանձնել որպես երրորդ անձ կամ չեն երաշխավորել դրանց կատարումը որպես երաշխավոր: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:
1.8. Ընկերության լրիվ ֆիրմային անվանումն է.
հայերեն՝ «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն
ռուսերեն՝ закрытое акционерное общество “АКБА ЛИЗИНГ’’ кредитная организация

անգլերեն՝ “ACBA LEASING” credit organization closed joint stock company

Ընկերության կրճատ ֆիրմային անվանումն է.
հայերեն՝ «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ»
ռուսերեն՝ “АКБА ЛИЗИНГ’’
անգլերեն՝ “ACBA LEASING”
1.9. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ ՀՀ, ք.Երևան, Յու. Ֆուչիկի փողոց 1/1 շենք, տարածքներ 288, 289:
1.10. Ընկերության միակ բաժնետերն է հանդիսանում «Ակբա Բանկ» բաց բաժնետիրական ընկերությունը (գրանցված՝ 29.03.1996թ., գրանցման համար՝ 70, բանկային գործունեության լիցենզիա թիվ 70, ՀՎՀՀ՝ 02520007):
1.11. «Ակբա Բանկ» ԲԲԸ-ն և «ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն, ի թիվս, առկայության դեպքում, այլ ընկերությունների, միասին կազմում են խումբ (այսուհետ նաև՝ Բանկի խումբ):
1.12. «Ակբա Բանկ» ԲԲԸ-ի խորհուրդը Բանկի Խմբի նկատմամբ իրականացնում է իր վերահսկողական գործառույթները՝ օրենսդրությամբ սահմանված սահմաններում և միջազգային լավագույն փորձին համապատասխան՝ հաշվի առնելով Բանկի Խմբի կառուցվածքը, գործունեության բնույթը և ռիսկերը:

«Ակբա Բանկ» ԲԲԸ-ի խորհուրդը պատասխանատու է Բանկի Խմբի կառավարման հստակ շրջանակի սահմանման համար, որը բաշխում է լիազորությունները և պատասխանատվությունները թե՛ մայր ընկերության, և թե՛ դուստր ընկերությունների մակարդակում՝ միաժամանակ հարգելով Ընկերության Խորհրդի իրավական և կառավարման ինքնուրույնությունը:

«Ակբա Բանկ» ԲԲԸ-ի խորհուրդը հաստատում է Բանկի Խմբի կառավարման քաղաքականությունը, վերահսկում է Բանկի Խմբի ռիսկերի կառավարման համակարգը և ապահովում է ներքին վերահսկողության և հաշվետվողականության պատշաճ մեխանիզմների առկայությունը՝ ինչպես առանձին ընկերությունների, այնպես էլ ամբողջ Բանկի Խմբի մակարդակներում:
1.13. Սույն Կանոնադրության և նորմատիվ իրավական ակտերի միջև հակասության դեպքում գործում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգավորումները:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

2.1. Ընկերության նպատակը միջին և երկարաժամկետ ֆինանսավորման միջոցով՝ օգտագործելով լիզինգային գործառնություններում կիրառվող մեթոդները և/կամ արտադրական ակտիվների լիզինգը՝ շահույթի ստացումն է:
2.2. Ընկերության գործունեության հիմնական տեսակները.
1) ֆինանսական վարձակալության (լիզինգ), այդ թվում դրանց բոլոր տարատեսակների իրականացում,

2) իր բաժնետեր իրավաբանական անձանցից, այլ իրավաբանական անձանցից, Հայաստանի Հանրապետությունից և Համայնքներից փոխառությունների ներգրավում և/կամ նրանց հետ նմանատիպ գործարքների կնքում,
3) վարկերի և փոխառությունների տրամադրում,
4) երաշխիքների տրամադրում,
5) իր բաժնետեր իրավաբանական անձանց, այլ իրավաբանական անձանց, ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայությունների մատուցում,
6) Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի շուկայում մասնագիտացված գործունեության (դիլերային, գործակալական) իրականացում,
7) արտարժույթի գնում և վաճառք, այդ թվում դրամի և արտարժույթի ֆյուչերսների և նման այլ գործարքների կնքում,
8) իր բաժնետեր իրավաբանական անձանցից, այլ իրավաբանական անձանցից թանկարժեք մետաղների, քարերի, ոսկերչական իրերի, արժեթղթերի, փաստաթղթերի և այլ արժեքների ի պահ ընդունում,
9) ֆինանսական խորհրդատվության մատուցում,
10) հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի ստեղծում և սպասարկում,
11)իր պարտքերի հետ ստացման գործունեության իրականացնում,
12) ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությամբ՝ միջազգային պրակտիկայում ընդունված և վարկային կազմակերպություններին բնորոշ այլ գործառնությունների իրականացում:
2.3. Կանոնադրության 2.2. կետի 8-րդ ենթակետով նախատեսված գործունեությամբ Ընկերությունը կարող է զբաղվել իր գործունեության վայրի ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տեխնիկական բավարարվածության պահանջները ապահովելուց հետո:
2.4. Ընկերությունը կարող է կնքել ցանկացած քաղաքացիաիրավական գործարք, որն անհրաժեշտ է կամ նպատակահարմար իր գործունեությունը իրականացնելու համար:
2.5. Ընկերությունը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային կամ այլ գործունեություն, որն ընդգրկված չէ նրան ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայով:
2.6. Ընկերությունն ինքն է որոշում իր կողմից մատուցվող ծառայությունների արժեքը:
2.7. Ընկերության և հաճախորդների միջև հարաբերությունները կարգավորվում են օրենքով և կողմերի միջև կնքված պայմանագրով, այդ թվում հրապարակային և անհատ պայմանագրով:
2.8. Սույն բաժնով սահմանված գործառնություններն Ընկերությունն իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

3.1. Ընկերությունն ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող գույք և ակտիվներ:

3.2.Ընկերությունն իրավունք ունի իրեն պատկանող գույքը վաճառել կամ փոխանցել այլ ընկերություններին, կազմակերպություններին կամ ֆիզիկական անձանց, փոխանակել այն, վարձակալության տալ, տրամադրել անհատույց ձևով, ինչպես նաև դուրս գրել այն սահմանված կարգով:
3.3.Ընկերության դրամական միջոցները պահվում են բանկերում սահմանված կարգով բացված հաշվարկային և այլ հաշիվներում:
3.4.Ընկերության գույքը գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո: Ընկերության հիմնական և շրջանառու միջոցների առգրավումը չի թույլատրվում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
3.5.Պետական մարմինների, իրավաբանական անձանց և քաղաքացիների կողմից Ընկերությանը հասցված վնասը ենթակա է փոխհատուցման դատարանի որոշմամբ:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ԴՐԱ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ

4.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 16 000 000 000 (տասնվեց միլիարդ) ՀՀ դրամ: Ընկերության կանոնադրական կապիտալը բաժանված է 200 (երկու հարյուր) հատ սովորական բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 80 000 000 (ութսուն միլիոն) ՀՀ դրամ անվանական արժեքով:
4.2.Ընկերության կանոնադրական կապիտալը սահմանում է Ընկերության Պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը չի կարող պակաս լինել ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով սահմանված չափից:
4.3.Պետական գրանցման պահին Ընկերության բաժնետոմսերը տեղաբաշխված են փակ բաժանորդագրության միջոցով, լրիվ վճարված և պատկանում են բաժնետերերին:
4.4.Բաժնետոմսերի արժեքը լրիվ վճարելուց հետո Ընկերությունը բաժնետերերին տրամադրում է համապատասխան քանակի տպագրական եղանակով պատրաստված բաժնետոմսերի հավաստագրեր: Ընկերության բաժնետերերի ռեեստրը վարում է ՀՀ Կենտրոնական Դեպոզիտարիան:
4.5.Ընկերությունն իրավունք ունի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի որոշմամբ բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը, եթե նախկինում թողարկված բաժնետոմսերը լրիվ վճարվել են:
4.6.Ընկերության կանոնադրական կապիտալը կարող է ավելացվել նաև.
1) ընկերության բաժնետերերի կողմից դրամական միջոցների լրացուցիչ ներդրումների հաշվին,
2) երրորդ անձանց կողմից լրացուցիչ ներդրումների հաշվին,
3) չբաշխված շահույթի հաշվին:
4.7.Ընկերությունը իր աուդիտի ենթարկված ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է շահույթի մի մասը ներդնել իր կանոնադրական կապիտալում՝

բաժնետերերին տեղաբաշխելով նոր բաժնետոմսեր կամ ավելացնելով տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքը:

4.8.Ընկերության բաժնետերերի կամ երրորդ անձանց բաժնետոմսերի բաժանորդագրության հաշվին կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումը ընդունվում է Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի կողմից, որով սահմանվում է լրացուցիչ ներդրումների գումարային արժեքը և ներդրումների կատարման կարգն ու ժամկետները:

4.9.Ընկերությունը կարող է հետագայում թողարկել արտոնյալ բաժնետոմսեր, որոնց ընդհանուր անվանական արժեքը չի կարող գերազանցել կանոնադրական կապիտալի 25%-ը:

4.10.Ընկերության փաստացի համալրված կանոնադրական կապիտալի նվազեցումը, ինչպես նաև գործունեության ընթացքում վճարված կանոնադրական կապիտալից շահաբաժիններ բաշխելը արգելվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից:

4.11. Ընկերությունում պարտադիր կարգով ստեղծվում է պահուստային հիմնադրամ կանոնադրական կապիտալի 15% չափով: Եթե պահուստային հիմնադրամի միջոցները պակասում են Ընկերության կանոնադրական կապիտալի 15%-ի չափից, ապա Ընկերությունը այն համալրում է իր շահույթի 5%-ի չափով մասհանումներից:

4.12. Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության խորհրդի որոշմամբ՝ ընկերության կրած կորուստները, վնասները ծածկելու, տեղաբաշխված բաժնետոմսերը ետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամի միջոցների օգտագործումը այլ նպատակներով չի թույլատրվում:

4.13.Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ ֆոնդեր, որոնք նպատակ ունեն նպաստել Ընկերության տնտեսական զարգացմանը:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Ընկերության բաժնետերերը պարտավոր են.

1) չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկությունները,

2) կատարել դրամական ներդրումներ սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով Ընկերության կանոնադրական կապիտալում:

5.2.Ընկերության յուրաքանչյուր բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները: Յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի.

1) մասնակցել Ընկերության Բաժնետերերի Ընդհանուր Ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ իրեն պատկանող բաժնետոմսերի չափով՝ ձայների իրավունքով,

2) մասնակցել Ընկերության կառավարմանը, ստանալ շահաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,

3) օգտվել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռքբերման իրենց նախապատվության իրավունքից,
4) ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, բացի գաղտնի փաստաթղթերից, այդ թվում ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին,
5) Ընկերության բաժնետերերը, որոնք Ընկերության կանոնադրական կապիտալում տիրապետում են ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի ոչ պակաս 5%-ին, իրավունք ունեն ցանկացած ժամանակ պահանջել Ընկերության հաշվետվությունների, այդ թվում գաղտնի փաստաթղթերի ստուգման համար փորձագետ կամ փորձագետների խմբի հրավիրում: Ստուգման հետ կապված ծախսերը վճարում է ստուգումը պահանջող կողմը,
6) Բաժնետերերի Ընդհանուր Ժողովներին իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
7) հանդես գալ առաջարկություններով Բաժնետերերի Ընդհանուր Ժողովում,
8) քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնետոմսերի ձայների չափով,
9) հայցով դիմել դատարան Ընկերության Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի կողմից ընդունված և գործող օրենքների ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
10) Ընկերության լուծարման դեպքում ստանալ գույքի իր հասանելիք մասը,
11) ունենալ օրենքով ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:
5.3.Ընկերության բաժնետերերը կանոնադրական կապիտալում 10-ից ավելի տոկոս բաժնեմաս կարող են ձեռք բերել միայն ՀՀ Կենտրոնական բանկի համաձայնությամբ:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ

6.1. Իր գործունեության ընթացքում Ընկերության ստացած շահույթը ենթակա է հարկման ՀՀ օրենսդրության համաձայն: Ընկերությունը կարող է շահաբաժիններ վճարել բացառապես տարեկան արդյունքներով:
6.2.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկերը և պարտադիր այլ վճարումները կատարելուց հետո ձևավորվում է ընկերության տրամադրության տակ մնացած շահույթը, որի բաշխումն իրականացվում է Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի որոշմամբ՝ սույն կանոնադրությամբ սահմանված ֆոնդերի համալրման, և շահաբաժինների վճարման նպատակով:
6.3. Ընկերության տարեկան շահաբաժինների վճարման վերաբերյալ որոշումն ընդունում է բաժնետերերի ընդհանուր ժողովը, որը սահմանում է վճարման կարգն ու պայմանները:
6.4.Ընկերության բաժնետերերին շահաբաժիններ վճարելն արգելվում է, եթե դրանք վճարման պահին ընկերության կրած կորուստները (վնասները) հավասար են այդ պահին ընկերության առկա չբաշխված զուտ շահույթի գումարին կամ գերազանցում են այն:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

7.1. Ընկերության կառավարման մարմիններն են.

ա) Բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ընդհանուր Ժողով),
բ) Ընկերության խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ),
գ) Ընկերության գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը (այսուհետ՝ Գլխավոր տնօրեն):

7.2. Ընդհանուր Ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:
Ընդհանուր ժողովն իրավունք չունի քննարկելու և որոշումներ ընդունելու այն հարցերի վերաբերյալ, որոնք օրենքի համաձայն և Ընկերության կանոնադրությամբ չեն սահմանվել որպես Ընդհանուր ժողովի իրավասություն:
Ընկերությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի գումարել բաժնետերերի տարեկան ժողով: Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:
7.3. Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացվում է Ընկերության խորհրդի կողմից՝ օրենքով Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում: ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով Ընդհանուր Ժողովն իրավունք ունի որոշ հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման իրավասությունը փոխանցել Խորհրդին:
7.4. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է Ընկերության գործադիր մարմնի՝ Գլխավոր տնօրենի կողմից:

Ընկերության գլխավոր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Ընկերության անունից կնքում է գործարքներ, գործում է Ընկերության անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր: Գործարքներ կնքելիս և լիազորագրեր տալիս կարող է օգտագործվել Գլխավոր տնօրենի ստորագրության ֆաքսիմիլ վերարտադրությունը և/կամ էլեկտրոնային թվային ստորագրությունը:

Գլխավոր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ: Գլխավոր տնօրենը նշանակվում է Խորհրդի կողմից, իսկ Գլխավոր տնօրենի տեղակալները՝ Խորհրդի կողմից՝ Գլխավոր տնօրենի ներկայացմամբ:
7.5. Ընկերության Ընդհանուր Ժողովում Ընկերության բաժնետեր «Ակբա Բանկ» ԲԲԸ-ն ներկայացնում է «Ակբա Բանկ» ԲԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրենը: Ընկերության Ընդհանուր Ժողովում «Ակբա Բանկ» ԲԲԸ-ի անունից ընդունվող որոշումները ենթակա են «Ակբա Բանկ» ԲԲԸ-ի խորհրդի նախնական հաստատման:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ընդհանուր ժողովի իրավասությունները

8.1. Ընդհանուր ժողովի իրավասություններն են.

1) Ընկերության կանոնադրության հաստատումը (ներառյալ՝ կազմակերպա-իրավական ձևի փոփոխությունը, գործունեության ժամկետի փոփոխությունը կամ երկարաձգումը, գրանցման վայրի փոփոխությունը), դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
2) Ընկերության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը (միաձուլումները, միացումները, բաժանումները, առանձնացումները, վերակազմավորումները), հարկային ռեզիդենտության կամ կորպորատիվ տեսակի փոփոխությունները,
3) Ընկերության տիպի (խմբի) և/կամ գործունեության տեսակի փոփոխման մասին որոշման ընդունումը,
4) Ընկերության գործունեության կամ ռազմավարության էական փոփոխությունը,
5) Ընկերության լուծարումը, կամավոր լուծարումը և/կամ գործունեության դադարեցումը, ընթացիկ բիզնեսի փոխանցման նպատակով ակտիվների մասնակի օտարումը կամ բիզնես լիզինգով տրամադրումը,
6) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, Ընկերության Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամների (Վերստուգողի) ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության Խորհրդի քանակական կազմի հաստատման, Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամների (Վերստուգողի) ընտրության հարցերը քննարկվում են բացառապես ընդհանուր տարեկան ժողովում: Ընկերության Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամների (Վերստուգողի) ընտրության հարցը Ընկերության Բաժնետերերի արտահերթ Ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ Վերստուգիչ հանձնաժողովի (Վերստուգողի) կամ դրանց առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,
7) Խորհրդի նախագահի կամ անդամի աշխատանքի վարձատրության պայմանների վերաբերյալ որոշման ընդունումը,
8) Ընկերության Վերստուգիչ հանձնաժողովի անդամների (Վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների հաստատումը,
9) օրենքով սահմանված արտաքին աուդիտն իրականացնող անձանց նշանակումը և ազատումը,
10) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
11) բաժնետոմսերի համախմբումը և բաժանումը,
12) Ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը Ընկերության կողմից ձեռք բերելու կամ դրանից հրաժարվելու մասին որոշման ընդունումը, եթե Ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:
13) մեկ տարվա ընթացքում մեկ ընկերության կամ ընկերությունների խմբի հետ նշանակալի ակտիվների օտարման կամ գնման ցանկացած գործարքի հաստատումը, որը գերազանցում է Ընկերության ընդհանուր կապիտալի 20 տոկոսը,
14) մեկ տարվա ընթացքում Ընկերության ընդհանուր կապիտալի 20 տոկոսից ավել ակտիվների նկատմամբ (ներառյալ ցանկացած բաժնետոմս կամ այլ գույքային իրավունք)

ապահովված իրավունքի, երաշխավորության կամ գրավի իրավունքի տրամադրման հաստատումը,

15) «Ակբա Բանկ» ԲԲԸ-ին պատկանող և Ընկերության ընթացիկ կամ ապագա գործունեության համար անհրաժեշտ ցանկացած մտավոր սեփականության իրավունքի վաճառքի, օտարման, փոխանցման կամ լիցենզիայի տրամադրման հետ կապված ցանկացած որոշում,

16) Ամփոփ, միջանկյալ և լուծարային հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,

17) Ընկերության տարեկան հաշվետվությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման, տարեկան շահաբաժինների վճարման, վճարման ժամկետի, չափի և ձևի հաստատումը, շահութաբաժիններ չվճարելու մասին որոշման ընդունումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ սույն ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ սույն ենթակետում նշված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի,

18) Կախյալ և դուստր ընկերությունների և առանձնացված ստորաբաժանումների ստեղծումը, կախյալ և դուստր ընկերություններին մասնակցությունը, մասնակցության չափերի փոփոխությունները և դադարեցումները, եթե այդ մասնակցությունը խոշոր գործարք չէ,

19) առանձին տեսակների կամ դասերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու կամ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները ոչ լրիվ չափով վճարելու մասին որոշումների ընդունումը,

20) ֆինանսական տարվա ավարտի ամսաթվի ցանկացած փոփոխություն, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ,

21) Ընդհանուր Ժողովի վարման կարգի հաստատումը,

22) Հաշվիչ հանձնաժողովի ձևավորման մասին որոշման ընդունումը,

23) Օրենքով սահմանված դեպքերում խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը,

24) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը, բաժնային կամ պարտքային այնպիսի արժեթղթերի և/կամ այլ այնպիսի արժեթղթերի թողարկումը, որոնք Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության կամ ձայնի իրավունքի որոշակի հնարավորություն են տալիս, ներառյալ՝ ցանկացած օպցիոններ կամ օպցիոններին նման այլ ֆինանսական գործիքներ, ինչպես նաև աշխատողների և ավագ ղեկավարների շահույթի բաշխման ցանկացած պլան,

25) օրենքով և Կանոնադրությամբ սահմանված դեպքերում Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին որոշման ընդունումը,

26) արժեթղթերի հրապարակային առաջարկի, ցուցակման կամ ապացուցակման վերաբերյալ ցանկացած որոշում, ներառյալ այդպիսի ցուցակման պայմանների սահմանումը, ցուցակման շուկայի ընտրությունը: Սույն ենթակետի իմաստով արժեթղթեր են համարվում ցանկացած բաժնետոմս կամ Ընկերության կողմից թողարկված կամ թողարկման ենթակա այլ արժեթուղթ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն, անմիջապես կամ ապագայում կտրամադրի հասանելիություն Ընկերության կանոնադրական կապիտալին, շահույթին, լուծարային արժեքին կամ ձայնի իրավունքին, ինչպես նաև այդ արժեթղթերի ցանկացած մաս,
27) Ցանկացած որոշում, որը վերաբերում է այնպիսի պետությունում ներդրման կատարմանը, որտեղ Ընկերությունը նախկինում էական գործունեություն չի ծավալել կամ Ընկերության գրանցման վայր հանդիսացող պետության փոփոխությունը,
28) Բաժնետերերի նախապատվության իրավունքի ժամանակավոր կասեցման և փոփոխման վերաբերյալ որոշման ընդունում,
29) Ընկերության աշխատակիցների բաժնետիրացման ծրագրերի հաստատումը, ինչպես նաև նշված ծրագրերի հետ կապված կամ այդ ծրագրերից բխող ցանկացած որոշում,
30) ՍԵՅՖ պայմանագրի կնքման մասին որոշման ընդունումը,
31) օրենքով Ընկերության Ընդհանուր ժողովին վերապահված այլ իրավասություններ:

8.2.Սույն Կանոնադրության 8.1. կետում նշված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Ընդհանուր ժողովի իրավասությանը և չի կարող փոխանցվել Ընկերության կառավարման այլ մարմիններին:

Որոշումների ընդունման կարգը

8.3. ա) Որոշումներն ընդունվում են Ընկերության Ընդհանուր Ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ, ընդ որում 8.1. կետի 1), 2), 4), 13), 16), 18) 23), 24) և 28) ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են Ընդհանուր Ժողովի կողմից Ժողովին մասնակցող Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերի ձայների 3/4-ով: Սույն կանոնադրության 8.1. կետի 5) և 29) ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են Ընդհանուր Ժողովի կողմից Ժողովին մասնակցող Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերի ձայների 2/3-ից:
բ) Ընկերության Ընդհանուր Ժողովի որոշումները կարող են ընդունվել առանց ժողովի գումարման՝ հեռակա կարգով քվեարկությամբ (հարցման միջոցով): Սույն Կանոնադրության 8.1. կետի 17) ենթակետով սահմանված հարցերի վերաբերյալ որոշումը չի կարող ընդունվել հեռակա կարգով քվեարկությամբ:

Ընդհանուր ժողովի կազմակերպումը և մասնակցությունը

8.4.Ընդհանուր ժողովի մասնակիցներն են.

1) Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը)՝ իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով,
2) Ընկերության բաժնետեր չհանդիսացող խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,
3) Ընկերության Վերստուգիչ հանձնաժողովի անդամները (Վերստուգողը),
4) Ընկերության աուդիտն իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում):

8.5. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:
8.6. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան ժողովի գումարումից 60 օր առաջ:
8.7.Եթե ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում է ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:
8.8. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու համար բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է ցուցակը կազմելու տարով, ամսով, ամսաթվով տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:
8.9. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է տվյալներ պարունակի յուրաքանչյուր բաժնետիրոջ անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և նրան պատկանող բաժնետոմսերի, ըստ դրանց տեսակների և դասերի մասին:
8.10.Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Ընկերության այն բաժնետերերին, որոնք գրանցված են Ընկերության բաժնետերերի ռեեստրում:
8.11. Ընկերության բաժնետիրոջ պահանջով Ընկերությունը պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք՝ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրա ընդգրկման մասին:
8.12.Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված բաժնետերերի խախտված օրինական իրավունքներն ու շահերը վերականգնելու նպատակով:
8.13.Ընկերության Բաժնետերերի տարեկան Ընդհանուր Ժողովը գումարվում է ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո 2-ից 6 ամսվա ընթացքում: Ընդհանուր ժողովերի հրավիրման միջև ընկած ժամանակահատվածը չի կարող գերազանցել 18 ամիսը:
Ընկերության ֆինանսական տարի է համարվում յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը:

8.14. Անհետաձգելի հարցերի քննարկման նպատակով կարող են հրավիրվել արտահերթ ժողովներ, որոնք կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
Արտահերթ Ընդհանուր ժողովները գումարվում են Ընկերության Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Վերստուգիչ Հանձնաժողովի (Վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ ընկերության առնվազն 10% ձայնի իրավունք ունեցող սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:
8.15. Բաժնետերերն ունեն կանոնադրական կապիտալում իրենց բաժնետոմսերի համապատասխան ձայնի իրավունք: Բաժնետերը Ընդհանուր Ժողովին մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով:
8.16. Ընկերության Ընդհանուր Ժողովն իրավասու է, եթե ժողովին ներկա են տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50%-ից ավելին տիրապետող բաժնետերերը կամ իրենց լիազոր ներկայացուցիչները:
8.17. Ընդհանուր ժողովի գումարման վերաբերյալ ժողովի մասնակիցները ծանուցվում են էլեկտրոնային փոստի միջոցով, ծրագրային և հավելվածային հարթակներով (ներառյալ՝ բջջային հեռախոսների հավելվածներով), ժողովի գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ: Ընդհանուր ժողովը կարող է որոշումներ ընդունել նաև այնպես, որ Ընդհանուր ժողովի ժամանակ բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային և հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների) միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման Ընդհանուր ժողովը հեռակա (հարցման) կարգով անցկացված չի համարվում: Սույն կարգով անցկացվող Ընդհանուր ժողովներում կարող են որոշումներ ընդունվել միայն օրենքով չարգելված հարցերի վերաբերյալ:
8.18. Ընկերությունն իր տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը հրապարակում է մամուլում Ընդհանուր ժողովի օրվանից առնվազն 15 օր առաջ:
8.19. Ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում Խորհուրդը որոշում է.
ա) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամն ու վայրը,
բ) ժողովի օրակարգը,
գ)ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը,
դ) բաժնետերերի ծանուցման կարգը և եղանակները,
ե) բաժնետերերին տրվելիք նյութերի ու տեղեկությունների ցուցակը,
զ) քվեաթերթիկների ձևն ու բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:
8.20. Ընդհանուր ժողովի նիստերը արձանագրվում են: Արձանագրությունները կազմվում են Ընդհանուր ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում՝ առնվազն 2 օրինակից:
Արձանագրությունները ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

8.21. Արձանագրության մեջ նշվում են՝
ա) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը,
բ) Ընկերության՝ տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը,
գ) ժողովին մասնակցած բաժնետերերին պատկանող ձայների գումարային քանակը,
դ) ժողովի նախագահը (նախագահությունը) և քարտուղարը (քարտուղարությունը), ժողովի օրակարգը:
Արձանագրությունը պետք է պարունակի ժողովում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, ժողովի ընդունած որոշումները:
Ընկերության բաժնետերերն իրավունք ունեն ծանոթանալ ժողովի արձանագրություններին:
8.22. Ընդհանուր ժողովի նախապատրաստումը և վարումը իրականացվում է սույն Կանոնադրության և Ժողովի հաստատած կարգի համաձայն:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Խորհրդի կազմը և ձևավորման կարգը

9.1. Ընկերության Խորհուրդը կազմված է 10 անդամից:
9.2.Ընկերության այն բաժնետերերը, որոնք Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի կամ դրանցով տրամադրվող ձայների 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Ընկերության Խորհրդի կազմում կամ նշանակել իրենց ներկայացուցչին:
9.3. Ընկերության բաժնետերը (բաժնետերերը), որը (որոնք) տիրապետում է (են) Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ դրանցով տրամադրվող ձայների քանակի առնվազն 2 տոկոսին, Ընկերության ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում, իրավունք ունի (ունեն) առաջարկել Խորհրդի անդամության թեկնածուներ: Առաջարկվող թեկնածուների քանակը չի կարող գերազանցել այդ մարմնում անդամների սահմանված քանակը:
9.4. Խորհրդի անդամության թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելիս, այդ թվում՝ ինքնաառաջադրման դեպքում, նշվում է թեկնածուի անունը, նրա Ընկերության բաժնետեր լինելու կամ չլինելու փաստը, նրան պատկանող Ընկերության բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակը՝ ըստ տեսակների և դասերի, նրան առաջադրող Ընկերության բաժնետերերի անունները (անվանումները), վերջիններիս պատկանող Ընկերության բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակը՝ ըստ տեսակների և դասերի:
9.5. Խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել դրանք տարեկան ժողովում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելու կամ

ընդգրկելը մերժելու մասին՝ սույն գլխի 9.3. կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ տասնհինգ օրվա ընթացքում:
Խորհուրդը կարող է որոշում ընդունել ներկայացված առաջարկները տարեկան ժողովի օրակարգում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին միայն այն դեպքում, եթե՝
ա) առաջարկ ներկայացրած բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից խախտվել է սույն գլխի 9.3. կետով սահմանված ժամկետը.
բ) առաջարկ ներկայացրած բաժնետերը (բաժնետերերը) չի (չեն) տիրապետում Ընկերության՝ սույն գլխի 9.3. կետով սահմանված քանակի քվեարկող բաժնետոմսերին կամ ձայների քանակին.
գ) լրիվ չեն կամ բացակայում են սույն գլխի 9.4. կետով սահմանված տվյալները.
դ) առաջարկը չի համապատասխանում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին:
9.6. Խորհրդի հիմնավորված որոշումը՝ ներկայացված առաջարկը տարեկան ժողովում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին, ուղարկվում է առաջարկը կամ թեկնածու ներկայացրած բաժնետիրոջը (բաժնետերերին)՝ որոշումն ընդունելու պահից 3 օրվա ընթացքում:
Խորհրդի որոշումը՝ ներկայացված առաջարկը տարեկան ժողովում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին, կարող է բողոքարկվել դատական կարգով:

Խորհրդի իրավասությունները

9.7.Ընկերության Խորհրդի իրավասություններն են.
1) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Ընկերության ռազմավարության և/կամ հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,
2) Ընկերության գործունեության շրջանակներից դուրս էական գործունեության ծավալման և Ընկերության բիզնեսի կամ գործունեության տեսակի փոփոխության նախահաստատումը, բացառությամբ այնպիսի նոր գործունեության ծավալման, որը թույլատրելի է իր վարկային կազմակերպության լիցենզիայով,
3) Օրենքով սահմանված կարգով Ընկերության տարեկան և արտահերթ Ընդհանուր Ժողովների հրավիրումը, Ընդհանուր Ժողովի օրակարգի, Ընդհանուր Ժողովի անցկացման տարվա, ամսվա, ամսաթվի, կարգի և ժողովի անցկացման մասին ծանուցման կարգի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են Խորհրդի իրավասությանը, այդ թվում՝ Ընդհանուր ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, Ընդհանուր Ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկի սահմանումը,
4) օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման և հետգնման հարցերի որոշումը,

5) օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի (բացառությամբ արժեթղթերի) ձեռքբերումը,
6) օրենքով սահմանված դեպքերում Ընկերության Գույքի շուկայական արժեքի սահմանման որոշման ընդունումը,
7) Ընկերության վերակազմակերպման, բաժնետոմսերի համախմբման, բաժանման հարցերը ժողովների քննարկմանը ներկայացնելը,
8) Ընկերության տարեկան հաշվետվությունը և տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ընդհանուր ժողովին ներկայացումը,
9) օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության կողմից շահագրգռվածության առկայության և/կամ խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունման հարցը ժողովների քննարկմանը ներկայացնելը,
10) օրենքով նախատեսված դեպքերում շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքելու մասին որոշման ընդունումը,
11) Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգի, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերի, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
12) Ընկերության ամենամյա ծախսերի նախահաշվի (բյուջեի) և դրա կատարողականի հաստատում,
13) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը,
14) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունը խոշոր գործարք չէ,
15) օրենքով սահմանված արտաքին աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափի հաստատումը, Ընկերության աուդիտի իրականացման կազմակերպումը և աուդիտ իրականացնող անձի ներկայացումը տարեկան Ընդհանուր Ժողովի հաստատմանը,
16) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահաբաժինների չափի, դրա վճարման ձևի և վճարման կարգի վերաբերյալ Ընդհանուր Ժողովին առաջարկությունների նախապատրաստում,
17) Ընկերության Գլխավոր տնօրենի, այդ Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի կամ գործադիր մարմնի ղեկավարի տեղակալների և Ընկերության գործադիր մարմնի այլ անդամների նշանակումը, վարձատրության պայմանների հաստատումը (ներառյալ ցանկացած տեսակի բնեղենով օգուտների տրամադրումը, շահույթի բաշխման սխեմաները և ծախսերի փոխհատուցումները), լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, պաշտոնավարման ժամկետի փոփոխությունները,
18) Ընկերության գործադիր մարմնի կողմից վճարովի այլ աշխատանք կատարելու վերաբերյալ համաձայնության տրամադրումը,
19) օրենքով նախատեսված դեպքերում Խորհրդի անդամության թեկնածուների վերաբերյալ առաջարկների քննարկումը և տարեկան ժողովում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին որոշման ընդունումը,

20) Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը,
21) Խորհրդին կից հանձնաժողովների (հանձնախմբերի) ձևավորումը, այդ թվում՝ աուդիտի,
22) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,
23) Ընկերության այնպիսի աշխատակիցների կամ ղեկավարների՝ Ընկերության գործադիր մարմնի կողմից աշխատանքի ընդունման, նրանց վարձատրության պայմանների սահմանման (ներառյալ ցանկացած տեսակի բնեղենով օգուտների տրամադրումը և շահույթի բաշխման սխեմաները), աշխատանքից ազատման և աշխատանքային պայմանագրերում փոփոխությունների հաստատման վերաբերյալ համաձայնության տրամադրումը, որոնց տարեկան ընդհանուր վարձատրության չափը (հաստատուն և փոփոխական) գերազանցում է 120,000,000 (հարյուր քսան միլիոն) ՀՀ դրամը,
24) Ընկերության պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը, որոնք հասանելիություն են տրամադրում կանոնադրական կապիտալին կամ ձայնի իրավունքների, այդ թվում՝ օպցիոններ, օպցիոնների նման այլ ֆինանսական գործիքներ, ինչպես նաև աշխատակիցների և ավագ ղեկավարների համար շահույթի բաշխման ցանկացած պլանի մասին որոշումների ընդունումը,
25) Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, մեթոդների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը, և ցանկացած փոփոխության հաստատումը,
26) Ընկերության կողմից ցանկացած տեսակի ընկերակցության կամ համատեղ գործունեության մասին որոշման ընդունման (այդ թվում՝ համատեղ գործունեության մասին պայմանագիր կնքելու կամ նոր իրավաբանական անձ հիմնադրելու եղանակով) կամ նույն բիզնես ոլորտի ընկերությունների հետ շահույթի բաշխման վերաբերյալ հարաբերությունների (բացառությամբ ֆինանսական ծառայություններին կամ պրոդուկտներին առնչվող) հաստատման և դրանց փոփոխությունների վերաբերյալ որոշումների ընդունումը,
27) Ընկերության կողմից ներդրումային ծառայություններ մատուցող ընկերության կամ տեղաբաշխողի ընտրության հետ կապված ցանկացած որոշման ընդունումը, ներառյալ ժամկետների և պայմանների սահմանումը,
28) Ընկերության կողմից մեկ տարվա ընթացքում մեկ ընկերության կամ ընկերությունների խմբի հետ նշանակալի ակտիվների օտարման կամ գնման ցանկացած գործարքի հաստատումը, որը կազմում է Ընկերության ընդհանուր կապիտալի 10-ից 20 տոկոսը,
29) Ընկերության կողմից մեկ տարվա ընթացքում Ընկերության ընդհանուր կապիտալի 10-ից 20 տոկոսը կազմող ակտիվների նկատմամբ (ներառյալ ցանկացած բաժնետոմս

կամ այլ գույքային իրավունք) ապահովված իրավունքի, երաշխավորության կամ գրավի իրավունքի տրամադրման հաստատումը,
30) Ընկերության կողմից ցանկացած այնպիսի պայմանագրի կնքման կամ դրանում փոփոխությունների վերաբերյալ որոշման ընդունումը, որն իր բնույթով բիզնեսի բնականոն շրջանակներից դուրս է կամ չի համապատասխանում շուկայական պայմաններին,
31) Ընկերության կողմից ցանկացած այնպիսի արտաքին ծառայություններ մատուցողի ներգրավման, փոխհատուցման, ծառայությունների դադարեցման և պայմանների փոփոխության վերաբերյալ որոշումների ընդունումը, որի համախառն տարեկան փոխհատուցման չափը (հաստատուն և, ըստ կիրառելիության՝ փոփոխական) գերազանցում է 300,000,000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամը,
32) Ընկերության կողմից օրենսդրության համաձայն՝ նշանակալի բաժնետիրոջ, խորհրդի անդամի, Գլխավոր տնօրենի, Գլխավոր տնօրենի տեղակալի, Վերստուգիչ հանձնաժողովի նախագահի (Վերստուգողի), գործադիր ղեկավարի, կառավարման մարմի այլ անդամի կամ նշված ցանկի անձանց ընտանիքի անդամների հետ գործարքների և դրանց փոփոխությունների, կամ այդպիսի գործարքների պայմանները սահմանող ներքին իրավական ակտի հաստատումը,
33) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների ստեղծումը, համալրումներն ու օգտագործումը,
34) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի մասին (ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով) որոշման ընդունումը,
35) օրենքներով և իրավական ակտերով սահմանված այլ իրավասություններ:

Խորհրդի որոշումների կայացման կարգը

9.8. Ընկերության Խորհրդի իրավասությանը կանոնադրությամբ վերապահված հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնին:

9.9. Ընկերության Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, ընդ որում 9.7 կետի 2), 17), 23), 24), 25), 26), 27), 28), 29), 30), 31), 32) ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումները կարող են ընդունվել միայն Ընկերության բաժնետեր «Ակբա Բանկ» ԲԲԸ խորհրդի նախնական համաձայնության առկայության դեպքում: Կողմ և դեմ քվեարկած ձայների հավասար քանակության դեպքում Ընկերության Խորհրդի նախագահին ունի որոշիչ ձայնի իրավունք:
9.10.Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:

Խորհրդի նախագահը

9.11. Խորհուրդը նախագահում է Խորհրդի նախագահը, ով ընտրվում է Խորհրդի անդամների կողմից՝ խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Ընկերության Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները Ընկերության Խորհրդի որոշմամբ կատարում է Ընկերության Խորհրդի նախագահի տեղակալը:

9.12. Խորհրդի նախագահը.

1) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,
2) գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը,
3) կազմակերպում է նիստերի արձանագրությունների վարումը,
4) նախագահում է Ընդհանուր Ժողովում,
5) կնքում է Գլխավոր տնօրենի հետ պայմանագիր:

Խորհրդի նիստերը

9.13. Խորհրդի նիստերը հրավիրվում են Խորհրդի նախագահի կամ տեղակալի կողմից ոչ պակաս, քան 3 ամիսը մեկ անգամ: Ընկերության Խորհրդի նիստերը կարող են անցկացվել հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով):

9.14. Ընկերության Խորհրդի նիստերը գումարվում են Ընկերության Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ՝ Ընկերության Խորհրդի անդամի, Վերստուգիչ հանձնաժողովի (Վերստուգողի), կամ Ընկերության Գլխավոր տնօրենի գրավոր պահանջով:

Ընկերության Խորհրդի նիստն իրավասու է (քվորում ունի), եթե նիստին մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին:

9.15. Ընկերության Խորհրդի գործունեությունն իրականացվում է Ընդհանուր ժողովի կողմից հաստատված կանոնակարգի համաձայն: Խորհրդի նիստի գումարման մասին անդամները պետք է ծանուցվեն նիստի գումարման օրվանից առնվազն երեք օր առաջ: Ծանուցումը կարող է իրականացվել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով կամ առձեռն հանձնելով կամ էլեկտրոնային կապի միջոցներով, ներառյալ՝ էլեկտրոնային փոստով, ծրագրային և հավելվածային հարթակներով (ներառյալ՝ բջջային հեռախոսների հավելվածներով): Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել նաև այնպիսի նիստում, որի ժամանակ Խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային և հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների) միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում: Սույն կարգով անցկացվող նիստերում կարող են որոշումներ ընդունվել միայն օրենքով չարգելված հարցերի վերաբերյալ:

9.16. Խորհրդի նիստերը արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են.

1) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,
2) նիստին ներկա անձինք,

3) նիստի օրակարգը,
4) քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները,
5) նիստում ընդունված որոշումները:
9.17. Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԸ

Գլխավոր տնօրենի իրավասությունները

10.1. Գլխավոր տնօրենը.
1) տնօրինում է Ընկերության գույքը՝ այդ թվում ֆինանսական միջոցները և գործարքներ է կնքում Ընկերության անունից,
2) Ընկերության անունից կնքում է այնպիսի գործարքներ, որոնք օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված չեն Խորհրդի և Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը,
3) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,
4) առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից,
5) տալիս է լիազորագրեր,
6) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր՝ այդ թվում աշխատանքային,
7) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
8) հաստատում է Ընկերության հաստիքացուցակը օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և ազատում Ընկերության աշխատակիցներին,
9) ընկերության աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
10) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,
11) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը,
12) լուծում է սույն Կանոնադրությամբ իրեն վերապահված այլ հարցեր, իր իրավասության շրջանակներում իրականացնում այլ իրավասություններ:

Գլխավոր տնօրենի պաշտոնավարումը

10.2 Ընկերության Գլխավոր տնօրենը կարող է կատարել վճարովի այլ աշխատանք միայն Ընկերության Խորհրդի համաձայնությամբ:

10.3 Գլխավոր տնօրենի որոշումները, որպես կանոն, իրագործվում են նրա հրամանների և կարգադրությունների հիման վրա:

10.4. Գլխավոր տնօրենը Խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ Խորհրդի սահմանած կարգով:

10.5 Խորհրդի որոշմամբ Գլխավոր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել ցանկացած ժամանակ՝ լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Ընկերության կողմից նրան փոխհատուցելու պայմանով: Սույն դրույթով նախատեսված դեպքում Գլխավոր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելիս փոխհատուցման չափը հաշվարկվում է Գլխավոր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշման կայացմանը նախորդող տասներկու ամիսների ընթացքում ստացված միջին ամսական աշխատավարձի հիման վրա, եթե վերջինիս հետ կնքված պայմանագրով այլ բան սահմանված չէ:

Ընկերությունն իրավունք ունի Գլխավոր տնօրենի պաշտոնից ազատված անձից հետ պահանջելու սույն մասի առաջին պարբերությամբ նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով Գլխավոր տնօրենի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԸ

11.1. Ընկերության հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը, ֆինանսական հաշվետվությունների կազմումը և ստորագրումը իրականացվում է Գլխավոր հաշվապահի կողմից:
11.2. Ընկերության Գլխավոր հաշվապահը իրականացնում է Ընդհանուր ժողովի կողմից, ինչպես նաև օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:
11.3. Գլխավոր հաշվապահը նշանակվում է Ընկերության Խորհրդի կողմից:

12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԸ)

12.1. Ընկերության Վերստուգիչ հանձնաժողովի իրավասությունները դրվում են Ընկերության Վերստուգողի վրա:
12.2. Վերստուգողն ընտրվում է Ժողովի կողմից՝ 3 տարի ժամկետով: Վերստուգողի նշանակման ժամկետի ավարտից հետո նոր ժամկետով Վերստուգողի նշանակման վերաբերյալ որոշում չընդունվելու պարագայում Վերստուգողի նշանակման ժամկետը համարվում է երկարաձգված ևս երեք տարով:
12.3. Վերստուգող կարող է լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված և Ընկերության այլ աշխատակից չհանդիսացող ցանկացած ֆիզիկական անձ:

12.4. Ընկերության Վերստուգողը.
1) Իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը և տարեկան արդյունքների ստուգումը,
2) Հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը,
3) Ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին և այլ իրավական ակտերին ու կանոնադրությանը,
4) Իրականացնում է Ժողովի կողմից, ինչպես նաև օրենսդրությամբ իրեն վերապահված այլ գործառույթներ:
12.5. Վերստուգողը հաշվետու է Ժողովին: Սեփական նախաձեռնությամբ Վերստուգողն իր հաշվետվությունները կարող է ներկայացնել նաև Խորհրդին:
12.6. Վերստուգողը Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ կազմում է եզրակացություն և վերջինս ներկայացնում է Ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ Վերստուգողի եզրակացությունը պարտադիր է:
12.7. Վերստուգողի պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերն ու բացատրությունները:
12.8. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերստուգումը կատարվում է ինչպես Վերստուգողի սեփական նախաձեռնությամբ ցանկացած ժամանակ, այնպես էլ Ժողովի, Խորհրդի, ինչպես նաև Ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:
12.9. Վերստուգման արդյունքներից ելնելով՝ Վերստուգողն իրավունք ունի պահանջել Ժողովի կամ Խորհրդի արտահերթ նիստի հրավիրում:
12.10. Վերստուգողն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Ժողովի կողմից հաստատված կանոնակարգով:

13. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

13.1. Ընկերության գործունեության արդյունքները արտացոլվում են Ընկերության հաշվապահական հաշվետվություններում:
13.2. Հաշվապահական հաշվետվությունները ներկայացվում են հարկային և պետական այլ մարմիններին, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկին վերջինիս կողմից սահմանված կարգով:
13.3. Ընկերությունը ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսյա ժամկետում հրապարակում է իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռը, ինչպես նաև ամփոփ աուդիտորական եզրակացությունը:
13.4. Եռամսյակային ֆինասական հաշվետվությունները ներկայացվում են մինչև հաջորդ ամսվա 15-ը:

14. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

14.1. Ընկերության գործունեությունը դադարում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում՝ լուծարման միջոցով:
14.2. Ընկերության լուծարումը տեղի է ունենում հետևյալ դեպքերում.
ա) լիցենզիան անվավեր ճանաչելու,
բ) լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու,
գ) ընկերության ինքնալուծարմամբ,
դ) օրենքով նախատեսված այլ հիմքերով՝ դատարանի վճռի հիման վրա:
14.3. Ընկերության ինքնալուծարման մասին Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն ընդունում է որոշում և ինքնալուծարման թույլտվություն ստանալու համար դիմում է ՀՀ Կենտրոնական բանկ՝ կցելով ինքնալուծարումը հիմնավորող փաստաթղթեր, որոնց ցանկը սահմանում է ՀՀ Կենտրոնական բանկը:
ՀՀ Կենտրոնական բանկի թույլտվությունը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում Ընկերության կառավարման բարձրագույն մարմնի կողմից ընդունված լուծարման նախագիծը ներկայացվում է ՀՀ Կենտրոնական բանկի հաստատմանը: Այդ նախագիծը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատվելուց հետո սկսվում է Ընկերության լուծարման ընթացակարգը՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:
14.4. Ընկերության լուծարման դեպքում նրա բոլոր դրամական միջոցները, ներառյալ Ընկերության գույքի իրացումից ստացված հասույթը, ուղղվում է պարտատերերի պահանջների բավարարմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ մնացած մասով բաշխվում է ընկերության բաժնետերերի միջև՝ Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն:
14.5. Ընկերությունը համարվում է լուծարված, լուծարային հանձնաժողովի կողմից իր գործունեության արդյունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկ ներկայացված հաշվետվությունը վերջինիս կողմից հաստատելուց հետո: